



# ՍՈՒՐՔ ԾԱԿՈՒ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ԾՆՈՒՄ ԵՒ ԱՍՏԻՃԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ

6 ՅՈՒՆԻՎԱՐ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

**ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՏԻՏՈՍԻ ԳՐԱԾ  
ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ  
(2.11-15)**

Աստուած իր շնորհքը յայտնեց, որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը կը մղէ մեզ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձրնէ, բարի գրոծերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուդ. քաջալերէ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՝ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս որ ոեւէ մէկը քեզ չարհամարհէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

(1.18-25)

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի

տոսի ծնունդը: Իր մայրը՝ Մարիամ նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախ քան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ, իր նշանածը, արդար մարդ ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զինք, այլ խորհեցաւ լռելեայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն երազի մէջ եւ ըսաւ. «Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախնար, ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ ան որ իրմէ պիտի ծնի Սուրբ Հոգիէն է: Անիկա զաւակ մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»: Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի Տիրոջ կողմէ ըսուածը Եսայի մարգարէին միջոցաւ.

«... ան որ իրմէ պիտի ծնի Սուրբ Հոգիէն է: ... ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»:

«Ահաւասիկ կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի: Անիկա էմմանուէլ պիտի կոչուի, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ»:

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայած էր իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց:

## ԱՂՕԹՔ

**Ա**րարիչ Հայր,  
մեր ծագումը մէջն է Սիրոյդ,  
որ յաւիտենական Նորութիւնն է:  
Ամէն զոջումէ յետոյ՝  
կը վերաշնչաւորես մեզ,  
եւ կը հրահրես  
հաստատուելու Սէր անուն  
յաւիտենական Նորութեանդ մէջ:  
Երբ արարեցիր՝  
ստեղծագործութիւնդ պատկազարդեցիր  
Նորութեամբդ.  
Երբ զայն տեսողութեանդ կ'արժանացնես՝  
կ'օժես կարգաւորութեան եւ

ներդաշնակութեան Նորութեամբդ.  
Երբ ինքնաքսորեալին կ'ընկերակցես՝  
զայն կը զգաստացնես Նորութեամբդ.  
Երբ թափառականին պատուիրաններդ կու  
տաս՝  
զայն կ'առաջնորդես Նորութեամբդ.  
Երբ զայն իրաւունքի ու արդարութեան  
ժառայ կը կարգես՝  
անոր սիրտը կը վերածես հնոցի,  
որ կը բորբոքի Նորութեամբդ.  
Երբ Որդիովդ եւ Հոգիովդ կ'աւետարանես  
անոր՝  
զայն կ'առաքես  
խոնարհութեան Նորութեամբդ.  
Երբ Տիրոջ օրով կը մխիթարես զայն՝  
անոր քայլերուն վստահութիւն կը շնորհես  
յոյսին Նորութեամբդ,  
ոյ Տէր,  
Արքան նորութիւններուն: Ամէն:

# ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ ՁԵԶԻ ՄԵԶԻ ՄԵԾ ԱԲԵՏԻՍ

## ՅԻՇԱԿԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի 2 Յունուար 2019

Ժամերգութիւն՝ ժամը 10.30

Հոգեհանգիստ՝ ժամը 11.00

## ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,

թող բարեհաճին դիմել

Տ. Գառնիկ Ա. Քինյ. Գոյունեանի,

հեռաձայնելով

514 909 5203 թիւին: